

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՄԱԼՅԱ ԲԱԲԿԵՆԻ

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՍՏՈՒԳՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

**ԺԳ. 00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (գերմաներեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մելանյա Գրիգորի Աստվածատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Իգոր Կարապետի Կարապետյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գայանե Վաղիմիրի Սավոյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 21-ին ժամը 14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հունիսի 11-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության արդիականությունը: Ժամանակակից աշխարհում առաջնային են դարձել արդի հասարակությունների զարգացման այնպիսի միտումները, ինչպիսիք են գլոբալացումը, միջազգայնացումը, տեխնոլոգիացումը, սոցիալական շարժունության դերի մեծացումը, հանրային կյանքի բոլոր ոլորտների տեղեկատվայնացումը, բազմալեզվությունն ու բազմամշակութայնությունը:

Հասարակությունների զարգացման համաշխարհային միտումներում, ինչպես նաև մեր երկրի հասարակական քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններն իրենց արտացոլումն են գտնում նաև ժամանակակից կրթության, մասնավորապես՝ լեզվակրթության համակարգում: Ինչպես նշվում է «Լեզուների իմացության/իրազեկության համակարգական համակարգ»-ում, այսօր սկզբունքորեն փոխվել է լեզվակրթության նպատակը: «Այն այլևս մեկ կամ երկու կամ նույնիսկ երեք լեզուների տիրապետելը չէ, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվում է առանձին՝ որպես իդեալ ունենալով լեզուն կրողի կատարյալ մակարդակը: Այս դեպքում նպատակն այնպիսի լեզվական «խաղացանկի» մշակումն է, որտեղ բոլոր լեզվական կարողություններն իրենց ուրույն տեղն ունեն» (ԼԻԻՀՀ, 2005, էջ 5):

Այսօր խիստ է դրված օտար լեզուների իմացության պահանջի խնդիրը: Այս խնդրի լուծման հետ կապված ծագում է նաև ուսուցանվող լեզուների դասավանդման որակը բարելավելու նպատակով օպտիմալ և համապատասխան մեթոդիկա մշակելու անհրաժեշտություն: Այս համատեքստում ժամանակակից մեթոդիկայի գլխավոր ուղղություններից մեկը ընթերցանության ուսուցումն է որպես օտարալեզու (մասնավորապես՝ գերմաներենի) հաղորդակցական և միջմշակութային իրազեկության հիմնական բաղադրիչ:

Ընթերցանության՝ որպես հաղորդակցական-ձանաչողական գործունեության դերը դժվար է գերազնահատել հասարակության զարգացման ժամանակակից փուլում: Զնայած մեդիակրթության սրընթաց զարգացմանը, ու նաև դրա շնորհիվ ընթերցանությունը շարունակում է մնալ տեղեկատվության ձեռքբերման հուսալի աղբյուր:

Ոչ լեզվական բուհում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակներից մեկը ընթերցանության ուսուցումն է: Սակայն առարկայական չափորոշիչներում և ծրագրերում ներկայացված պահանջներն ամբողջությամբ չեն արտացոլում ընթերցանության առանձին տեսակների և դրանց առանձնահատկությունների ուսուցման խնդիրները: Ըստ էության, առարկայական ծրագրերում սահմանված են ընթերցանության նախապայմանները, նպատակները և ընթերցածը ստուգելու միջոցները, առավելագույնս՝ ավանդական միջոցները, բայց գրեթե չկան ընթերցանության առանձին տեսակների ուսուցման առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ բավականաչափ մշակված չէ հատկապես ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մեթոդիկան: Մեթոդական գրականության մեջ այսօր կարելի է գտնել հետազոտություններ և աշխատություններ, որոնք ուղղված են կամ ընթերցանության ուսուցման մեթոդիկայի ընդհանուր սկզբունքներին կամ ընթերցանության տիրապետման կարողությունների ստուգման եղանակներին, ինչպես նաև ընթերցանության

ուսուցման առանձին խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, տեքստին ներկայացվող պահանջները, լեզվական նյութի ընտրությունը, լեզվական նյութի ներմուծումը: Սակայն առկա հետազոտություններում տեղ չի գտել ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման և ստուգման ռազմավարության նկարագրությունը:

Ընթերցանության հիմնահարցին նվիրված բազմաթիվ աշխատություններ կան ինչպես հանրակրթական դպրոցի, այնպես էլ լեզվական ու ոչ լեզվական մասնագիտացման բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, այդ թվում նաև Հայաստանում:

Այսպես, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առանձնահատուկ կարևորվում են այն հետազոտությունները, որոնք նվիրված են ընթերցանության ուսուցման մեթոդիկայի ընդհանուր հարցերին (Ժամհարյան Վ., Сыздыкова З. Ж., Циммерман Г. А., Иванова О. Н., Карпов Д. А.), ոչ լեզվական ֆակուլտետներում ընթերցանական կարողությունների ծնավորման և ընթերցանության տեխնիկայի զարգացման ուղիներին (Շահիրյան Ծ., Петрушевская Н. Н., Гокжаева Т. Г., Артемьева О. Н., Кулешова А. Ю.), մասնագիտական կողմնորոշման ուսումնական տեքստերի բառապաշարի և քերականական նյութի ընտրության ու կազմակերպման հիմնախնդրին (Պետրոսյան Ռ., Լուլուկյան Ս.), ընթերցանության ուսուցման և ստուգման ձևերին (Товма Е.Л., Путинцева Т.В., Պապոյան Ա., Աթոյան Լ. և այլք): Առանձնահատուկ պետք է նշել Ս.Կ. Ֆոլոմկինայի աշխատությունները, որը հսկայական ներդրում է ունեցել օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում, հատկապես ընթերցանության ուսուցման ասպարեզում (Фоломкина С.К., 1971, 1979, 1986, 2005): Նա ոչ միայն նոր մոտեցում է մշակել ընթերցանության հիմնախնդրին և հիմնավորել, այլ նաև առաջադրել է ընթերցանության տարբեր տեսակների ուսուցման սկզբունքների յուրահատուկ դասակարգում, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ուսուցման մանրակրկիտ մեթոդաբանությունը, ներառյալ՝ իր աշակերտների և հետևորդների հետազոտությունները (Витковская Ж.В., 1975, 1985, 2013, Шевченко Н.И., 1978, Сомере К.Э., 1986):

Պետք է նշել, որ թվարկված աշխատություններում ընթերցանության տեսակների դասակարգումը կատարվել է **ըստ տեքստի շուրջ տարվող աշխատանքի կազմակերպման ձևերի**: Այդ իսկ պատճառով հեղինակները ելնում էին կամ *ընկալման գործընթացի որևէ գերակայող գործոնից (վերլուծական-համադրական, թարգմանական-ոչ թարգմանական)* կամ *տեքստի լեզվական նյութի շուրջ տարվող աշխատանքի բնույթից (ինտենսիվ-էքստենսիվ, նախապատրաստված-հանպատրաստից ընթերցանություն)*: Նման մոտեցումները հիմնականում չեն արտացոլում օբյեկտիվ ընթերցանության գործընթացի բուն էությունը: Վճռորոշ է այն փաստը, որ ընթերցանության տեսակները դասակարգելիս, հատկապես ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության պարագայում, շեշտը պետք է դնել հաղորդակցական նպատակների վրա, այսինքն՝ հաշվի առնել տեղեկատվության ըմբռնման լիակատարության, խորության և ճշգրտության չափանիշները (Фоломкина С. К., Некоторые вопросы обучения чтению на иностранном языке в неязыковом вузе. Иностранные языки в высшей школе. Вып. 6. М. 1971. С.3–12): Նշենք նաև, որ վերոհիշյալ աշխատությունները մեծ մասամբ սահմանափակվում են հիմնականում բազմընտրանքային (multiple

choice), ճիշտ/սխալ (true-false) կամ համակցման (matching) տեխնիկաներով՝ անտեսելով այլ հնարավորությունները:

Ինչպես ցույց է տալիս մեր աշխատանքային փորձը, ոչ լեզվական ֆակուլտետների սովորողների զգալի մասի մոտ բավարար մակարդակով չեն զարգացած տեքստերի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող կարողություններն ու հնտությունները:

Ընթերցանությունը որպես լեզվական–հաղորդակցական իրազեկության կարևոր ճանաչողական բաղադրիչ, ենթադրում է ոչ միայն գիտելիքների հանրագումար, այլ նաև գիտելիքներն ինքնուրույն լրացնելու, ընդլանելու, համապատասխան տեղեկատվությունը դուրս բերելու և տեքստի բովանդակության ստուգումն իրականացնելու կարողությունների ձևավորում:

Օտար լեզվով ընթերցանության բովանդակության ստուգման ավանդական ձևերի կողքին լայնորեն կիրառվում են նաև այլընտրանքային տեխնոլոգիաներ, հատկապես թեստային համակարգը: Մի շարք մեթոդիստներ (Աթոյան Լ. Ս., Суворов С. П., Фоломкина С. К., Соомеке К.Э., Красюк Н. И., Мильруд Р. П., Funk H., Häusermann U., Sheils J., West M., Westhoff G., Albers H.G., Bolton S., Grotjahn R., Kleppin K. և այլք) նշում են բազմաթիվ առավելություններ, որոնք առանձնացնում են թեստավորումը ստուգման մյուս ձևերից: Այստեղ էականն այն է, որ ընթերցողը կարող է որոշ դեպքերում հասկանալ ընթերցածի բովանդակությունը՝ հիմնվելով պայմանական նշանների վրա, այսինքն՝ ինքնաստուգում կատարի: Մեծ նշանակություն ունեն չափման այնպիսի պարամետրերը, ինչպիսիք են ստուգման գործընթացի միօրինակությունը, օբյեկտիվությունն ու հուսալիությունը և մեծ թվով սովորողների միաժամանակյա ստուգման հնարավորությունը:

Թեստերի օբյեկտիվության աստիճանը սահմանվում է քանակական ցուցիչների հիման վրա, ինչը պարտադիր պայման է մանկավարժական գնահատման պահանջներն ապահովելու համար: Ընդունելով թեստերի առավելությունները որպես ստուգման օբյեկտիվ տեխնոլոգիաներ, այնուամենայնիվ, որոշ մեթոդիստներ և դասավանդողներ (Аствацатрян М. Г., Цатурова И. А., Фоломкина С.К., Витковская Ж.В. և այլք) գտնում են, որ թեստերն ուղղված են ոչ թե փոխարինելու ստուգման ավանդական ձևերին, այլ լրացնելու դրանք:

Մենք լիովին համաձայն ենք Ս.Կ.Ֆոլոմկինայի այն կարծիքին, որ թեստավորման ենթակա է մասնավորապես ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանությունը, որի նպատակն է այս կամ այն աղբյուրից տեղեկատվության դուրս բերումը՝ առանց դրա հետագա վերարտադրման:

Ամփոփելով շարադրվածը կարելի է եզրահանգել, որ թեմային առնչվող առկա հետազոտությունները թեև որոշակի դրական ներդրում ունեն օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ասպարեզում, այդուհանդերձ չեն անդրադառնում նորովի էական ուսումնական խնդիրներին:

Վերը նշված փաստարկներով և այս թեմայով է պայմանավորված մեր **հետազոտության հիմնահարցը և արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է ոչ լեզվական ֆակուլտետներում գերմաներեն բնագրերի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության կարողությունների ստուգման ռազմավարության մշակումը:

Հետազոտության օբյեկտն է ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության ընթացքում բովանդակության ըմբռնման ստուգման հիմնահարցը:

Հետազոտության առարկան է ընդհանուր բովանդակության ընկալման նպատակով ոչ լեզվական ֆակուլտետներում գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ըմբռնման ստուգման ռազմավարությունը:

Հետազոտության գիտական վարկածը: Առաջ է քաշվում հետևյալ ենթադրությունը, որ բնագրերի բովանդակության ստուգումն ավելի արդյունավետ կլինի, եթե

- դուրս բերվեն ընթերցանության՝ որպես ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության էությունը, առանձնահատկությունները և տեսակները,
- ճշգրտվեն ընթերցվող տեքստերի բովանդակության ըմբռնման ստուգման օբյեկտները՝ որպես խոսքային գործունեության ընկալողական տեսակ,
- սահմանվեն տեքստերի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ստուգմանը ներկայացվող մեթոդական պահանջները,
- մշակվի թեստային առաջադրանքների մեթոդական համակարգ՝ ուղղված տեքստի բովանդակության ընկալման ստուգմանը՝ ընթերցանության տվյալ տեսակի նպատակին և նրա քանակական ու որակական բնութագրիչներին համապատասխան,
- հաստատվեն և հաղթահարվեն այն դժվարությունները, որոնք կապված են ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության առանձին կարողությունների զարգացման հետ և որոնք անհրաժեշտ են խոսքային գործունեության այս տեսակին:

Հետազոտության խնդիրներն են.

- վերլուծել ընթերցանության ուսուցման բնագավառին առնչվող հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականությունը,
- բացահայտել ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները,
- սահմանել տվյալ տիպի ընթերցանության կարողությունների ստուգման օբյեկտները,
- մշակել լեզվական նյութի բացատրման և իմաստավորման եղանակները,
- մշակել տեքստերի բովանդակության ստուգման մեթոդական համակարգ,
- իրականացնել ընթերցանության թեստավորում՝ տեքստի ընդհանուր բովանդակության ընկալումը ստուգելու նպատակով,
- փորձարկել ընթերցանության այս տեսակի համար մշակված ստուգման թեստային համակարգը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում հետևյալ հայեցակարգային դրույթները.

- ուսուցման **անձնակենտրոն մոտեցումը**, ըստ որի պետք է հաշվի առնել սովորողի անհատական հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները, պահանջներն ու հետաքրքրությունները՝ զարգացնելով սովորողի ստեղծագործական ընդունակությունները և ձևավորելով նրա ինքնավարության, ինքնակառավարման և ինքնաստուգման կարողությունները (Бухарова Г.Д., Арефьев О.Н., Выготский Л.С., Леонтьев А.Н., Бим И.Л., Зимняя И.А., Гальскова Н.Д., Шатилов С.Ф., Успенская В.Б., Чернявская Ф.П., Rösler D.,

Sheils J., Würffel N., Wren S., Plurilingual Education in Europe. 50 Years of international co-operation. Language Policy Division և այլք),

- **Կոմպետենտության և գործունեության մոտեցումը**, որի գլխավոր առանձնահատկությունը ուսուցումն է գործունեության մեջ, տարբեր կոմպետենցիաների ամբողջություն ձևավորելու կարողությունը, մասնավորապես լեզվական, խոսքային, սոցիալ-մշակութային, ուսումնաձանաչողական, փոխհատուցման և այլն (Выготский Л.С., Леонтьев А.Н., Бим И.Л., Зимняя И.А., Кузьминов Я.И., Шадриков В.Д., Сысоев П.В., Сафонова В.В., Хуторской А.В., Соловова Е.Н., Ballweg S., “Gemeinsamer Europäischer Referenzrahmen für Sprachen. Lernen, lehren, beurteilen”, “Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment”, «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում»),
- օտար լեզուների տիրապետման **հաղորդակցական-ձանաչողական ուղղվածությունը** ինստիտուցիոնալ ուսուցման տարբեր աստիճաններում (Рахманов И.В., Миролубов А.А., Соловова Е.Н., Щепилова А.В., Цетлин В.С., Бим И.Л., Барышников Н.В., Barkowski H., Веако J. և այլք),
- բազմալեզվության զարգացման մոտեցումը (Аствацатрян М.Г., Сафонова В.В., Тер-Минасова С.Г., Веако J., Byram M., Brintizer M., Hantschel Hans J., GER, Guide for development of language education policies in Europe, Lambelet A., Berthele R., Language Education Policy Profile)
- ընթերցանության ուսուցման մեթոդաբանությունը, որտեղ դիտարկվում են ընթերցանության ուսուցման ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանուր հարցերը (Ժամհարյան Վ.Ռ., Շահիրյան Ծ.Է., Պապոյան Ա.Գ., Бим И.Л., Григорьева Е.Я., Лисийчук Т.П., Маркова Е.С., Махмурян К.С., Рахманов И.В., Фоломкина С.К., Burmeister L., Dutta S., Ehlers S., Freeman W.H., Graves M., Karlin R., Kylele B., Nutall Ch., Richards J. C., Scrivener J., Sheils J., Westhoff G., West M.)
- ընթերցանության բովանդակության ստուգման նպատակով թեստերի ներմուծումը ուսումնական գործընթաց որպես սովորողների՝ ձեռքբերումների գնահատման/ինքնագնահատման այլընտրանքային տեխնոլոգիա (Фоломкина С.К., Суворов С.П., Alderson J.C., Grotjahn R., Kleppin K., Missen R., Morrow L., Scott A.):

Հետազոտության փուլերը

Առաջին փուլում (2012-2015թթ.) ճշգրտվել է աստենախոսության բովանդակությունը, թեմային վերաբերող հասկացական ապարատը, ուսումնասիրվել է մասնագիտական գրականությունը:

Երկրորդ փուլում (2015-2017թթ.) ուսումնասիրվել են ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության նպատակները, տեսակներն ու առանձնահատկությունները, հստակեցվել են ընթերցանության օբյեկտները, մշակվել է մեթոդական համակարգ:

Երրորդ փուլում (2017-2018թթ.) անցկացվել է փորձարարական ուսուցում: Այս փուլում ամփոփվել են փորձարկման ընթացքում ստացված տվյալները, ձևավորվել են եզրակացությունները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման անբաժանելի նախապայման է հաղորդակցական և միջմշակութային իրազեկության ձևավորումը:

2. Ուսուցման գործընթացի անբաժանելի մասն է մանկավարժական ստուգումը՝ որպես այդ գործընթացի որակի և յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումների մասին տեղեկատվության ստացման միջոց, որի հիմքում ընկած են անձնակենտրոն, գործունեության և կոմպետենտության վրա հիմնված մոտեցումները:

3. Ստուգման օբյեկտների սահմանումը և թեստերի միջոցով ստուգման ներդնումը որպես ձևավորված ընկալողական (ռեցեպտիվ) կարողությունների որակի կառավարման գործիք, նպաստում են ուսուցման կրթական նոր տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև օտար լեզվի ուսուցման գործընթացում ընթերցանության բնագավառում սովորողների գնահատմանն ու ինքնագնահատմանը:

4. Թեստային առաջադրանքներն ուղղորդում են սովորողի գործողությունները (տեքստի տրոհում իմաստային մասերի, գլխավոր և երկրորդական տեղեկատվության տարբերակում, հիմնական գաղափարի բացահայտում, կրճատում և այն), ինչը նպաստում է բովանդակության ընկալման ստուգմանն ու ինքնաստուգմանն ուղղված կոմպետենցիաների ձևավորմանը:

5. Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մշակված մեթոդական համակարգը ապահովում է մի կողմից՝ առանձին ռեցեպտիվ կարողությունների ձևավորումը, մյուս կողմից՝ տեքստի բովանդակային, ինչպես նաև լեզվական կողմի ընկալումը:

6. Մշակված թեստային առաջադրանքներն ավելի արդյունավետ և օբյեկտիվ են դարձնում սովորողների գիտելիքների, կարողությունների և ընդունակությունների, ինչպես նաև տեքստի բովանդակության ընկալման ստուգման հնարավորությունները՝ բարձրացելով ուսումնական դրդապատճառները և ընդլայնելով ինքնաստուգման դաշտը:

Հետազոտության գիտական նորոյթը.

Ներկայացվում է ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման, ինչպես նաև ստուգման գործիքի ստեղծման մեթոդապես ապահովված նոր հայեցակարգային մոտեցում և տեքստերի բովանդակության ընկալումը թեստերի միջոցով ստուգող մեթոդական համակարգ, որի հիմքում ընկած են՝

1. Իմաստային դաշտի արդիականացումը և հարաբերակցումը վարկածի ընդհանուր գաղափարին:

2. Ընթերցանության գաղափարի նորովի բացահայտումը և սահմանումը առանձնահատուկ չափանիշների հիման վրա, մասնավորապես՝ ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության գաղափարի բնութագրումը և նրա **քանակական** ու **որակական բնութագրիչների**, այդ թվում՝ ընկալվող տեղեկատվության *լիակատարության* *լամբդաականության* և *խորության ճշգրտումը*:

3. Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության կարողությունների ցանկի սահմանում, որը ներառում է գործողություններ՝

ա) ուղղված լեզվական կողմի յուրացմանն ու ըմբռնմանը,

բ) կապված

— տեքստի էական փաստացի բովանդակության ընկալման հետ,

— այնպիսի կարողությունների ձևավորման հետ, ինչպիսիք են տեքստի փաստերի հիման վրա դատողություններ անելը, հիմնական իմաստային բլոկների բացահայտումը, սահմանազատումը և մեկնաբանումը,

— կրահման և հավանական կանխատեսումների մեխանիզմների ձևավորման հետ:

4. Տեղեկատվական տեքստերի բովանդակության ստուգման օբյեկտների սահմանում:

5. Տեքստերի բովանդակության ըմբռնման ստուգման ռազմավարության և թեստային մեթոդիկայի մշակում:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Ընդլայնվել և հարստացվել են ընթերցանության ուսուցման տվյալները:
- Իրականացվել է ընթերցանության տեսակների տարբերակում՝ ըստ ուսուցման նպատակի:
- Տեսականորեն հիմնավորվել է ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման հայեցակարգային նոր մոտեցում և իրականացվել է թեստավորմամբ տեքստերի իմաստի ըմբռնման ստուգում:
- Համակարգվել է տվյալ տեսակի ընթերցանության ուսուցման առաջադրանքների և բովանդակության ընկալումը ստուգող թեստային առաջադրանքների կառուցվածքը:
- Մշակվել է օտար լեզվի դասավանդման մեթոդիկայում ընդհանուր տվյալ տեսակի ընթերցանության կարողությունների ստուգման նոր ռազմավարություն:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- Փորձարկվել է ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման և ստուգման նոր մոտեցում:
- Հիմնական դրույթները և ստացված արդյունքները կարող են օգտագործվել օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսական և գործնական դասընթացներում:
- Ընթերցանության կարողությունների ստուգման նոր տեխնոլոգիան կարող է ներդրվել դասավանդման պրակտիկայում, սեմինարների անցկացման ժամանակ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում :

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովվում են ժամանակակից հոգեբանամանկավարժական, մեթոդական տեսությունների, հայեցակարգերի, Եվրախորհրդի մոտեցումների վերլուծությամբ, կիրառված մեթոդներով և ռազմավարությամբ, տեսական դրույթների փորձարկմամբ, ստացված արդյունքների վերլուծությամբ:

Աշխատանքի փորձաքննությունը.

Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Ուսումնասիրության արդյունքները հրապարակվել են նաև վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքով 111 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության՝ **«Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության մեթոդական հիմքերը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Ժամանակակից լեզվակրթության քաղաքականության սկզբունքները»** ենթագլխում անդրադարձ է կատարվում Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության խնդիրներին, «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում մշակված՝ լեզվի տիրապետման մակարդակների համընդհանուր համակարգին, քանի որ օտար լեզուների ուսուցման և ուսումնառության բնագավառում այսօր չափազանց կարևորվում են լեզուների իմացության մակարդակները, լեզվի տիրապետման մակարդակի ստուգումը բնութագրիչների համակարգի հիման վրա, այդ թվում նաև ընթերցանության ոլորտում, սովորողների առաջընթացի բացահայտումը: Դիտարկելով վեց հիմնական մակարդակները՝ նկատում ենք, որ վերջիններս ներկայացնում են կրթական ոլորտում լեզուների իմացության մակարդակների դասական բաժանման համակարգի՝ տարրական, միջին և բարձր, համապատասխանաբար ավելի բարձր ու ավելի ցածր ենթամակարդակները: Ինչ վերաբերում է գերմաներենի որպես երկրորդ լեզվի ուսուցմանը, ապա ուսանողների մեր համակազմի համար ընթերցանության ոլորտում ընդունված է B1 մակարդակը:

Երկրորդ՝ **«Ընթերցանության՝ որպես ընկալողական (ռեցեսսիվ) խոսքային գործունեության ուսուցման նպատակները»** ենթագլխում բացահայտվում են ընթերցանության ուսուցման նպատակները: Հիմնվելով Եվրախորհրդի կողմից մշակված «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ» աշխատության վրա՝ քննության է առնվում լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան, որն իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ՝ լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական: Անդրադարձ է կատարվում վերջիններիս առանձնահատկություններին և խոսքային գործունեության դրսևորման տարբեր ձևերին՝ մասնավորապես ընթերցանությանը: Այս ենթագլխում դիտարկվում են ընթերցանության տեսակների դասակարգման մոտեցումներն ու սկզբունքները, ԼԻԻՀՀ-ում տարբերակված ընթերցանության տեսակները (էջ 80-83), ինչպես նաև վերլուծության է ենթարկվում ընթերցանության յուրաքանչյուր տեսակ՝ հիմնվելով Ս.Կ. Ֆլոմկինայի կողմից մշակված հայեցակարգի վրա: Գործնականում ընթերցանության տեսակների դասակարգման հարցում կիրառվում է երկու հիմնական չափանիշ՝ բովանդակությունը լիարժեք հասկանալու աստիճանը, որն ապահովում է գործունեության արդյունքը, և ընթերցանության արագությունը, որը չափվում է ընթերցանող բառերի քանակով և հանդես է գալիս որպես տեխնիկական հմտությունների ավտոմատացման աստիճանի ցուցանիշ:

Երրորդ՝ **«Ընթերցվող տեքստի ընդհանուր բովանդակության ընկալման առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացվում են ընթերցանության տեսակներից մեկի՝ ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները: Կարդալու ընթացքում տեղեկատվության բովանդակային վերամշակման համար ընթերցողը պետք է կարողանա առանձնացնել գլխավորը երկրորդականից, տարբերել էականը

անէականից, հստակ հասկանալ առանձին փաստեր, գնահատել ընկալվող տեղեկատվությունը և այլն: Ըստ Ս.Կ. Ֆոլոմկինայի, այս դեպքում ընթերցանության արագությունը պետք է կազմի ընդամենը 220 բառ, ինչը քանակական առումով էապես տարբերվում է գերմաներենից, որտեղ բառային միավորները շատ ավելի երկար են: Այն ընթերցողից պահանջում է տարբեր մակարդակներում տեքստի տարրերի ամբողջական, համադրական ընկալում՝ լեզվական նյութի ճանաչման և ապակողավորման մեխանիզմների հիման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչպիսի կարողությունների համակարգված ձևավորումն ու կիրառումն է ապահովում ընդհանուր բովանդակությանը ժանրամասնոր ընթերցանության տեսակը, այս ենթազխում անդրադառնում ենք Ն. Ի. Շևչենկոյի կողմից սահմանված հիմնական և օժանդակ կարողություններին:

Ատենախոսության՝ **«Ոչ լեզվական բուհերի ուսանողների՝ ընթերցանության ընկալման ստուգման առանձնահատկությունները»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Ստուգումը որպես սովորողների ընթերցանական կարողությունների զարգացման աստիճանի ցուցանիշ»** ենթագլխում սահմանվում է «ստուգում» հասկացությունը: Բացահայտվում են ստուգման որպես ուսուցման և մասնագիտական գործունեության կառավարման կարևորագույն միջոցի նպատակները: Որպես մանկավարժական խնդիր ստուգումը էական նշանակություն ունի ուսուցման գործընթացի արդյունավետության և որակի բարելավման համար, հատկապես բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում:

Սովորողների գործունեության կառավարման գլխավոր խնդիրներից մեկը ստուգման պահանջների համապատասխանեցումն է չափանիշների մակարդակին: Ուսուցման գործընթացում ստուգման համակարգի դերը սովորողների ձեռքբերումների չափումն ու սահմանումն է:

Գնահատումը ուսուցման-ուսումնառության համակարգի առանցքն է, նրա անբախտելի մասը: Միևնույն ժամանակ կարևոր է նաև սահմանել այն ցուցիչները, որոնք բնութագրում են գործունեության կամ այս կամ այն կարողության աստիճանը: Ընթերցանության արդյունքների *ստուգումը* կատարվում է սովորողի ձեռք բերած տեղեկատվությունը տեքստի բովանդակության տեղեկատվության հետ համեմատելով: Ընթերցանության պարագայում ընկալման դժվարությունները հիմնականում հաղթահարվում են լեզվական միավորների և տեքստի կառուցվածքային բաղադրիչների վերլուծության շնորհիվ:

Երկրորդ՝ **«Ստուգման և գնահատման չափանիշները»** ենթագլխում դիտարկվում են տեքստերի բովանդակության ընկալման ստուգման և գնահատման չափանիշները: Օտար լեզվի դասավանդման մեթոդիկայում լեզվի գործնական տիրապետման մակարդակի ստուգումը հիմնականում ուղղված է լեզվական նյութի յուրացմանը և հաճախ հուսալի չի օտար լեզվով այս կամ այն խոսքային գործունեության տիրապետման աստիճանը սահմանելիս: Ուստի այսօր մեթոդիկայում մեծ տեղ է տրվում թեստավորմանը, հատկապես սովորողների խոսքային գործունեության (ընթերցանություն, ունկնդրություն, գրավոր խոսք) մակարդակը ստուգելիս: Թեստերի համակարգի չափանիշները վերլուծելիս մենք հիմնվել ենք Հ.Գ.Ալբերսի և Ս.Բոլթոնի, Ռ.Գորթայնի և Բ.Քլեյհինի, ինչպես նաև Ս.Կ.Ֆոլոմկինայի և այլ աշխատությունների վրա:

Աշխատանքում առանձնացվում են ստուգման հետևյալ չափանիշները՝ արժանահավատությունը (Validität), հուսալիությունը (Reliabilität), օբյեկտիվությունը (Objektivität), իրագործելիությունը (Durchführbarkeit), ինչպես նաև վերլուծության են ենթարկվում տեքստի ընկալման քանակական (լիակատարություն) և որակական (ճշգրտություն և խորություն) բնութագրիչները:

Երրորդ՝ **«Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ստուգման օբյեկտները»** ենթազխում վերլուծության են ենթարկվել ընթերցանության ստուգման օբյեկտները: Ընթերցանության կարողության ստուգման արդյունավետ կազմակերպումն առավելապես պայմանավորված է ստուգման ենթակա բուն օբյեկտների ճիշտ ընտրությամբ: Մեր պարագայում ստուգման օբյեկտներն են օտար լեզուն որպես հաղորդակցական միջոց գործնականում կիրառելու գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Հմտությունները ստուգելիս առանցքային են համարվում մի կողմից լեզվական միավորների (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն), ընկալման ավտոմատացված ունակությունը, մյուս կողմից՝ այդ միավորների միջև գոյություն ունեցող իմաստային կապերի հասկանալը: Որպես հմտությունների ձևավորվածության ցուցանիշ դիտարկվում են բառային միավորների և քերականական կառույցների ըմբռնման և օգտագործման արագությունը, ինչպես նաև դրանց ճշտությունը: Այս ենթազխում անդրադարձել ենք նաև ընթերցանության տեխնիկային, որը նույնպես կարող է հանդես գալ որպես ստուգման օբյեկտ: Ընթերցանության տեխնիկայի զարգացման կարևոր ցուցանիշներից է համարվում, ինչպես նշում է Ս.Կ. Ֆոլոմկինան, ընթերցանության արագությունը, ըստ որի կարելի է դաստի ընթերցանության այս կամ այն հմտությունների ձևավորվածության աստիճանի մասին (Фоломкина С.К. Обучение чтению на иностранном языке в неязыковом вузе. Высшая школа. М.2005. с. 38-40): Թեստում ընթերցանության արագությունը հանդես է գալիս որպես ընթերցանությանը բնորոշ հմտությունների և կարողությունների ձևավորվածության ցուցանիշ և ստուգման օբյեկտ:

Չորրորդ՝ **«Սովորողների հայտորոշիչ ստուգումը թեստավորման միջոցով (հայտորոշիչ/ նախափորձարարական թեստավորում)»** ենթազխում ամփոփված են սովորողների հայտորոշիչ թեստավորման արդյունքները, ինչպես նաև թեստավորման ընթացակարգը, պայմանները, ժամկետները, հայտորոշիչ թեստի առաջադրանքները և ստուգման չափանիշները: Ոչ լեզվական բուհում սովորողների ընթերցանական կարողությունների տիրապետման մակարդակը որոշելու և դժվարությունները բացահայտելու համար անհրաժեշտ է ձշտել.

- ինչպես են իրականացվում ընթերցանությանը վերաբերող ծրագրային պահանջները,
- լեզվական նյութի՝ ռեցեպտիվ բառապաշարի և քերականական կառույցների տիրապետման մակարդակը,
- այն գործոնների ու դժվարությունների բացահայտումը, որոնք խոչընդոտում են ընթերցանության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Հաշվի առնելով վերը նշվածը անցկացվել է նախափորձարարական թեստավորում՝ սովորողների գիտելիքների տիրապետման մակարդակի և դժվարությունների բացահայտմանը նպատակով: Հայտորոշիչ թեստն ընդգրկում է առաջադրանքներ՝ ուղղված բառիմաստի բացահայտմանը, քերականական գիտելիքների տիրապետմանը, ընթերցածի բովանդակությունը

հասկանալու կարողությունների ստուգմանը, տեքստում անհրաժեշտ տեղեկատվության դուրս բերմանը:

Հայտորոշիչ թեստավորման արդյունքները

Աղյուսակ 1

Առաջադրանք	Պատասխան			
	Ճիշտ է	Թերի է	Սխալ է կամ բացակայում է	Հնարավոր քանակ
1.	221	-	379	600
2.	94	32	234	360
3.	87	-	273	360
4.	75	17	208	300
5.	126	591	483	1200
Ընդի. պատ.	603	640	1577	2820
Տոկոս. հարաբ.	21,38%	22,7%	55,92%	100%

Սովորողների կողմից թույլ տված տիպական սխալների վերլուծությունը հնարավորություն ընձեռեց բացահայտել վերջիններիս դժվարությունները՝ բառապաշարի ոչ լիարժեք տիրապետում, բառիմաստի բացահայտման եղանակների թերի տիրապետում, նախադասությունների տրոհում, պարբերությունների միջև իմաստային կապի ստեղծում, բազմիմաստ բառերի՝ տվյալ համատեքստում նշանակության բացահայտում, ուղղագրության ոչ բավարար տիրապետում, բարդ քերականական կառույցների ոչ բավարար տիրապետում. բայական բարդ ժամանակածևերի քերականական հայտանիշների ճանաչման և հասկացման, քերականական ձևի և նշանակության կապի հաստատման անկարողություն, ընթերցանական կարողությունների թերի զարգացում: Վերը նշված դժվարությունները որպես վճռորոշ գործոն հաշվի են առնվել մեր կողմից մեթոդական համակարգը մշակելիս և փորձարարական ուսուցումն անցկացնելիս: Վերոնշյալ փաստարկները վկայում են նոր ռազմավարության, տեխնոլոգիաների և մեթոդների մշակման ու կիրառման մասին:

Ատենախոսության երրորդ՝ «Տեքստերի ընդհանուր բովանդակության ընկալման ստուգման մեթոդական համակարգի մշակում» խորագրով գլուխը կառուցված է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Մասնագիտական տեքստերի բովանդակության ստուգման տեսամեթոդական հիմունքները և ռազմավարությունը» ենթագլխում հանգամանորեն անդրադարձ է կատարվում ընթերցանության երեք հիմնական փուլերին՝ նախաընթերցանական, բուն ընթերցանական և հետընթերցանական, ինչպես նաև յուրաքանչյուր փուլում առաջարկվող մի շարք ռազմավարությունների: Ըստ ընթերցանության կարողությունների տիրապետման մակարդակի՝ ընդունված է սովորողներին խմբավորել որպես

«հասուն» և «սկսնակ» ընթերցողներ: Վերլուծության են ենթարկվում ընթերցանության յուրաքանչյուր փուլում «հասուն» և «սկսնակ» ընթերցողների կարողությունների որակական տարբերությունները: Այս ենթազխում կարևորվում են նաև բառիմաստի բացահայտման լեզվական և ոչ լեզվական եղանակները:

Երկրորդ՝ **«Սովորողների գիտելիքների և ընթերցանության կարողությունների ստուգումը թեստավորման միջոցով»** ենթազխում վերլուծության են ենթարկվում ընթերցանության բովանդակության ընկալումը ստուգելու համար նախատեսված թեստերը, ինչի արդյունքում պարզ է դառնում, որ ընթերցածի բովանդակության ընկալումն իրականացնում է գլխավորապես տեքստերի պարբերությունների ընկալման հիման վրա, ինչը դիտարկվում է որպես կարևոր նախապայման ամբողջ տեքստի ըմբռնման համար:

Քանի որ ընթերցանությունը խոսքային գործունեության բարդ տեսակ է, նրա թեստավորումը նախատեսում է ընթերցանությանը բնորոշ մի շարք կարողությունների և հմտությունների ինչպես տարբերակված, այնպես էլ ամբողջական ստուգում: Թեստավորման համակարգը՝ որպես կարողությունների ստուգման և գնահատման այլընտրանքային տեխնոլոգիա, ունի մի շարք առավելություններ՝ ի տարբերություն ստուգման ավանդական ձևերի: Նախ՝ թեստաբանները շեշտը դնում են ժամանակի տնտեսման վրա, երկրորդ՝ բոլոր սովորողները կատարում են միևնույն առաջադրանքները, ինչը հնարավորություն է տալիս նաև աշխատել միաժամանակ հավասար պայմաններում: Երրորդ կարևոր հանգամանքը առաջադրանքների ստուգման օբյեկտիվ բնույթն է:

Այս ենթազխում քննության են առնվում մեթոդական գրականության մեջ և դասավանդման պրակտիկայում լայն տարածում գտած այսպես կոչված **փակ տիպի թեստերը** (geschlossene Aufgaben), **բաց տիպի թեստերը** (offene Aufgaben) և **կիսաբաց տիպի թեստերը** (halboffene Aufgaben), վերջիններիս կիրառման յուրահատկությունները և առանձնահատկությունները:

Երրորդ՝ **«Ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի փորձարկում և արդյունքների վերլուծություն»** ենթազխում ներկայացվում է ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի արդյունավետության հիմնավորման նպատակով իրականացված փորձարարական հետազոտության ընթացքը և արդյունքների վերլուծությունը:

Փորձարարական աշխատանքներին մասնակցել են 3-րդ կուրսերի 60 ուսանող: Փորձարկման նյութը ընտրված տեքստերը, մշակված վարժությունների համակարգը, ընթերցանության ուսուցման և ստուգման առաջադրանքներն ու ռազմավարություններն են: Փորձարարական ուսուցման նպատակն է ճշտել, թե

- ընտրված ռազմավարությունների ու վարժությունների համակարգը որքանով է դրական արդյունք տվել,
- որքանով այն նպաստեց սովորողների ընթերցանության կարողությունների զարգացմանը:

Փորձարարական ուսուցման համար առանձնացվել են հետևյալ փուլերը.

1-ին փուլ - Լեզվական կարողությունների (բառապաշար, քերականական կառույցներ, խոսքային նմուշներ) ձևավորում և ամրապնդում:

2-րդ փուլ – Ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնման կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացում:

3-րդ փուլ – Թեստավորման անցկացում:

4-րդ փուլ – Ստուգում, արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Փորձարարական թեստավորման նպատակն է լեզվական կարողությունների, ինչպես նաև տեքստի ընդհանուր բովանդակությունը հասկանալու կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանի ստուգումը:

Փորձարարական թեստավորման բոլոր առաջադրանքներն ուղղված են ընթերցանության բովանդակության ըմբռնման ստուգմանը.

- Ստուգել և որոշել սովորողների լեզվական իրազեկության մակարդակը՝
 - բառաձևի ճանաչումը,
 - բառիմաստի բացահայտումը,
 - բառերի, բառակապակցությունների և նախադասությունների միջև իմաստային կապի ստեղծումը,
 - քերականական գիտելիքների և հմտությունների տիրապետումը:
 - Ստուգել սովորողների կողմից տեքստի գլխավոր փաստերի դուրսբերման, անհրաժեշտ տեղեկատվության որոնման կարողությունները, տեքստում կողմնորոշվելու կարողությունը:
- Ստորև ներկայացնում ենք փորձարարական թեստավորման արդյունքները:

Փորձարարական թեստավորման արդյունքները

Աղյուսակ 2

Առաջադրանք	Պատասխան			
	Ճիշտ է	Թերի է	Սխալ է կամ բացակայում է	Հնարավոր քանակ
1.	551	43	6	600
2.	227	69	4	300
3.	259	32	9	300
4.	263	31	6	300
5.	856	17	87	960
Ընդհ. պատ.	2156	192	112	2460
Տոկոս. հարաբ.	87,64%	7,8%	4,55%	100%

Թեստավորման արդյունքների վերլուծությունը փաստեց, որ հայտորոշիչ և փորձարարական աշխատանքների տվյալների միջև բավականին մեծ տարբերություն կա, այսինքն՝ մեր առջև դրված նպատակն իրագործել ենք: Ստուգողական աշխատանքների արդյունքների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել դրական տեղաշարժ: Առաջադրանքների արդյունքներից պարզ դարձավ, որ բառապաշարային և

քերականական հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման արդյունքում, կիրառելով համապատասխան լեզվական գիտելիքներ՝ ուսանողների մեծ մասին հաջողվել է կատարել բառի ճիշտ ընտրություն: Վերլուծությունը ցույց տվեց, որ ընթերցանության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանի ստուգմանն ուղղված առաջադրանքների արդյունքներում նույնպես առկա է դրական տեղաշարժ: Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների մեծ մասին հաջողվել է ըմբռնել տեքստի հիմնական գաղափարը, առանձնացնել գլխավոր փաստերը երկրորդականից, վերլուծել, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Փորձարարական ուսուցման արդյունքում ուսանողների մեծ մասին հաջողվել է համակցել նախադասության առանձին մասերը և ստանալ ամբողջական, լիիմաստ նախադասություն, ինչպես նաև վերականգնել տեքստը՝ լրացնելով բացթողնված բառերը:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ մեր կողմից մշակված մեթոդական համակարգն արդյունավետ է և դրա ապացույցը ստացված արդյունքներն են: Այդ փաստը հաստատում է գիտական վարկածը՝ մեր կողմից մշակված մեթոդական համակարգի արժանահավատությունը և արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մեթոդիկական և տեքստի բովանդակության ըմբռնման ստուգումը կարևորագույն բաղադրիչ են ինչպես հանրակրթական, այնպես էլ բուհական ուսուցման համակարգերում, մասնավորապես՝ ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների, (մեր դեպքում՝ գերմաներենի) ուսուցման մեթոդաբանության զարգացման համար:

2. Հիմնվելով օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ընթերցանության ոլորտում կատարված հետազոտությունների վրա՝ բացահայտվել են ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանությանը՝ որպես վերլուծական-համադրական և ընկալողական-մտածական խոսքային գործունեությանը բնորոշ և էական նշանակություն ունեցող չափանիշներ, ինչպիսիք են՝

- տեքստի հիմնական բովանդակության ըմբռնումը 70-75%-ի սահմաններում,
- դասավանդման գործընթացում ստուգման՝ այնպիսի լայն տարածում ունեցող ձևի սահմանափակումը, ինչպիսին է տեքստի բովանդակության վերարտադրումը,
- հիմնական, կարևոր տեղեկատվության ընկալման ծավալը,
- ընկալված տեղեկատվության *լիակատարությունը* (հասկացած փաստերի քանակը), *ճշգրտությունը* (հեղինակի մտահղացման համարժեք ընկալումը) և *խորությունը* (տեղեկատվության մեկնաբանության բնույթը):

3. Ստացվող տեղեկատվության հասկացման վրա ազդող էական գործոն է տեքստի տարբեր մակարդակների ըմբռնման կարողությունը՝ սկսած բառային միավորների իմաստավորումից, քերականական կառույցների ձանաչումից և վերջացրած հեղինակի մտահղացման բացահայտումից:

4. Ուսուցման, մասնավորապես՝ ընդհանուր բովանդակությանը

ծանոթանալով ընթերցանության կարողությունների թեստավորման՝ որպես հայտորոշման և ստուգման մեթոդի կիրառման ընթացքում շեշտը պետք է դնել ստուգման օբյեկտների ճիշտ բացահայտման և սահմանման վրա:

5. Թեստերի միջոցով ստուգումը կազմակերպելիս վճռորոշ են ստացված արդյունքները, հատկապես տեքստի ընկալումը տարբեր մակարդակներում, մի կողմից՝ բառային միավորների և քերականական կառույցների ճանաչման ավտոմատացումը, մյուս կողմից՝ դրանց ինտեգրումը իմաստային ոլորտում:

Ծանոթացնող ընթերցանության ընթացքում էական նշանակություն ունեն հետևյալ կարողությունները.

- ընթերցանության արագությունը,
- տեքստի կառուցվածքում կողմնորոշվելը,
- լեզվական միավորների իմաստավորման նպատակով համապատասխան «հենարաններ» օգտագործելը,
- տեքստի հիմնական գաղափարի և հեղինակի մտահղացման բացահայտումը,
- գլխավոր փաստերի որոնումն ու առանձնացումը,
- տեքստի հիմնական իրադարձությունների տրամաբանական հաջորդականության պարզաբանումը,
- կշահման և հավանական կանխատեսումների մեխանիզմների իրագործումը:

6. Տեքստի բովանդակության ըմբռնման ստուգման գործիքակազմում հատուկ տեղ են գրավում մշակված թեստերի համակարգը, հատկապես այսպես կոչված cloze-test-ը, որը պետք է լայնորեն կիրառվի որպես բազմագործառութային ստուգման միջոց:

7. Թեստային առաջադրանքները խմբավորվում են համապատասխան «բլոկներում», որոնք անմիջականորեն համակցվում են թե՛ ստուգման օբյեկտների դասակարգմանը, թե՛ լեզվական տարբեր մակարդակներին, թե՛ առարկայական–բովանդակային կողմին (բառային, քերականական, հնչյունաբանական):

8. Սովորողներին առաջարկվում է գործիք, որն ուղղված է ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության տեքստերի շուրջ տարվող գործողությունների աստիճանակարգի յուրացմանը, ինչպես նաև բովանդակության ընկալման ստուգմանը:

9. Փորձարարական ուսուցման արդյունքները փաստում են հետազոտության վարկածի ճշմարտացիությունը և մեր կողմից մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Պետրոսյան Ա. Բ., Ոչ լեզվական բուհում օտար լեզուների ուսուցումը եվրոպական լեզվակրթության համատեքստում, Խ. Արմվյանի 200 ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ 2, Երևան, 2010, էջ 162-65
2. Պետրոսյան Ա.Բ., Մասնագիտական տեքստերի ընկալման ռազմավարությունները, Որակյալ ուսուցման հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցում, ՀՀ ԿԳՆ և «Մանկավարժական

- նախածեռնություն» հայկական ասոցիացիա հասարակական կազմակերպության համատեղ գիտաժողովի հոդվածների հավաքածու, մաս 1, Երևան, Հաշ-ընդ-հաշ փրինթ, 2013, էջ 105-111
3. Պետրոսյան Ա. Բ., Թեստը որպես տեքստի բովանդակության ստուգման միջոց, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Գիտական հոդվածներ, N2, Երևան, 2016, էջ 94-97
 4. Պետրոսյան Ա. Բ., Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության կարողությունների ձևավորման առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Գիտական հոդվածներ, N2, Երևան, 2016, էջ 98-101
 5. Պետրոսյան Ա. Բ., Ընթերցանության՝ որպես ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության ստուգման օբյեկտները, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Գիտական հոդվածներ, N2, Երևան, 2017, էջ 134-137
 6. Պետրոսյան Ա. Բ., Լեզվական նոր նյութին ծանոթանալու տեխնոլոգիաները մասնագիտական կողմնորոշման դասընթացում, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Գիտական հոդվածներ, N1, Երևան, 2020, 160-170

ПЕТРОСЯН АМАЛИЯ БАБКЕНОВНА

СТРАТЕГИИ КОНТРОЛЯ ПОНИМАНИЯ СОДЕРЖАНИЯ ПОДЛИННЫХ ТЕКСТОВ НА НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ НА НЕЯЗЫКОВЫХ ФАКУЛЬТЕТАХ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - "Методика преподавания и обучения" (немецкий язык).

Защита диссертации состоится 21-го июля 2021 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования

Доминирующие тенденции развития общества в современном мире, глобализация, интернационализация, информатизация всех сторон жизни, повышение роли мобильности, многоязычие и поликультурность вызывают настоятельную необходимость изменений концептуальных положений и в сфере образования. Сегодня остро стоит проблема овладения иностранными языками, равно как и требование повышения уровня владения языками. В связи с этим встает вопрос о рационализации процесса и качества обучения, а также необходимости создания новой методики обучения иностранным языкам, а именно в области обучения чтению. В неязыковом вузе чтение рассматривается как главная цель, как основной компонент иноязычной (в данном случае немецкий язык) коммуникативной и межкультурной компетенции, в частности чтение с общим охватом содержания текстов или

ознакомительное чтение согласно классификации С.К. Фоломкиной. Однако в предметных стандартах и учебных программах не находят отражения разные виды чтения и их особенности в национальной аудитории.

Проблеме чтения посвящено большое количество работ для различного контингента обучающихся, как для общеобразовательной, так и для высшей школы языкового и неязыкового профиля, как за рубежом, так и в нашей республике. В существующих работах проблемы обучения чтению рассматриваются в общем плане без учета специфики конкретных видов чтения.

Особо следует выделить работы доктора наук, профессора С.К.Фоломкиной, которая внесла огромный вклад в методику преподавания иностранных языков. Ею выдвигается и обосновывается не только новый подход к проблеме чтения, но и предлагается оригинальная классификация принципов обучения отдельным видам чтения, а также детальная разработка каждого из них, включая исследования, выполненные под ее руководством, в частности чтение с общим охватом содержания текстов или ознакомительное чтение. Таким образом, для обеспечения полноценного владения навыками и умениями чтения необходимо развить методику обучения и контроля подлинных текстов с общим охватом содержания или ознакомительного чтения.

Вышеприведенными доводами обусловлены основная проблема и актуальность исследования.

Цель исследования

Разработать стратегии контроля ознакомительного чтения подлинных текстов с общим охватом содержания на немецком языке для студентов неязыковых факультетов.

Задачи исследования

- Изучить состояние проблемы и подвергнуть анализу психолого-педагогическую и методическую литературу по теме исследования.
- Уточнить понятие “чтение с общим охватом содержания (или «ознакомительное чтение»), выявить особенности данного вида чтения и установить объекты его контроля.
- Установить трудности понимания подлинных текстов с общим охватом содержания на немецком языке студентами неязыковых факультетов с учетом специфики армянского языка. Разработать способы презентации, осмысления и объяснения языкового материала .
- Разработать методическую систему контроля понимания содержания текстов.
- Составить тесты для контроля понимания прочитанных текстов.
- Путем опытного обучения обосновать эффективность тестового контроля понимания с общим охватом содержания подлинных текстов на немецком языке.
- Осуществить проверку содержания прочитанного с помощью предварительно составленных тестов.

Новизна исследования

В основу разработанной методической системы обучения ознакомительному чтению положены следующие концептуальные положения.

- Актуализация смыслового поля “чтение” в соответствии с целью, задачами и гипотезой исследования.
- Новый подход к обучению чтению на основе современных данных и таких параметров, характеризующих его сущность, как полнота (количественная характеристика понимания) и качественные характеристики - глубина (характер интерпретации понятой информации), и точность (адекватность смыслового восприятия текста за мыслю автора).
- Установление объектов контроля.
- Уточнение основных умений ознакомительного чтения, связанных
 - с восприятием языкового материала,
 - со смысловым восприятием содержания текста, в том числе обусловленных этапом формирования механизмов вероятностного прогнозирования.
- Поэтапный тестовый контроль понимания содержания текстов ознакомительного чтения.

Теоретическое значение исследования

- Расширились и обогатились данные методики обучения чтению, в частности с общим охватом содержания текстов.
- Теоретически обоснован новый концептуальный подход к обучению и контролю чтения текстов и дифференциация видов чтения, в частности с общим пониманием и указанием релевантных его параметров.
- Реализована типология тестовых заданий с целью контроля понимания текстов с общим охватом содержания.

Практическое значение исследования

- Апробирован на практике новый подход, направленный на реализацию стратегий тестового контроля понимания текстов с общим охватом содержания.
- Основные положения разработанного подхода могут быть включены
 - в курс методики обучения иностранных языков
 - реализованы в практике преподавания иностранных языков и семинарских занятиях,
 - использованы во время педагогической практики студентов, а также для слушателей курсов повышения квалификации.

Структура и объем исследования

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем работы составляет 111 компьютерные страницы. Основные результаты исследования опубликованы в 6 научных статьях.

PETROSYAN AMALYA BABKEN

STRATEGIES OF CONTROLLING THE CONTENT COMPREHENSION OF AUTHENTIC TEXTS IN GERMAN AT NON-LANGUAGE FACULTIES

Thesis for the scientific degree of Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.02 - "Teaching and Learning Methodology" (German language).

The defense of the thesis will be held on July 21, 2021 at 14⁰⁰ at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: 0010, Yerevan. Yerevan, Tigran Mets ave. 17.

SUMMARY

The relevance of the research. The dominant trends in contemporary society, such as globalization, internationalization, the informatization of all aspects of life, the increasing role of mobility, multilingualism and multiculturalism, make it imperative to change the conceptual approaches in the field education.

Today the problem of mastering foreign languages is acute and as result the demand to improve the level of language proficiency. This raises the question of streamlining the process and quality of learning, as well as the need to create new methods of teaching foreign languages, in particular in the area of learning to read.

In non-language universities, reading is seen as the main goal, as a major component of foreign language (in this case German) communicative and intercultural competence, in particular reading for information or reading for gist according to the classification of S.K. Folomkina. However, in the subject standards and curricula are not reflected different types of reading and their peculiarities in the national audience.

There are many works devoted to the problem of reading for different groups of students, both for general education and for higher education of linguistic and non-language profile, both abroad and in our country. In the existing works the problems of learning to read are considered in general terms without taking into account the specificity of certain kind of reading, the typology of types of reading, in particular reading for information/gist, is not developed. The work of Professor S.K. Folomkina, who has made a huge contribution to the methodology of teaching foreign languages, should be highlighted. She puts forward and justifies not only a new approach to the problem of reading, but also offers an original classification of the principles of teaching certain types of reading, as well as a detailed development of each of them.

Thus, in order to ensure the full mastery of reading skills and abilities, it is necessary to develop the methodology of teaching reading comprehension and control of authentic texts with a general coverage of content or reading for gist.

The problem and relevance of our research are consistent with the above facts and with this topic.

The aim of the research is develop strategies for controlling reading for information of authentic texts with general content coverage in German for non-language students.

The objectives of the research

- To study the state of the problem and to analyze psychological and pedagogical and methodological literature on the research topic.
- To clarify the concept of "reading for information (or reading for gist)", to identify the features of this type of reading and to establish the objects of its control.
- To identify difficulties in understanding authentic texts with the general scope of content in German by students of non-language faculties.
- To develop ways of presentation, comprehension and explanation of language material.
- To elaborate a methodological system for monitoring content comprehension.
- Creating tests to check reading comprehension.
- Experientially justify the effectiveness of reading comprehension test control of authentic texts in German.

The scientific novelty of the research. The developed methodological system of teaching introductory reading is based on the following conceptual premises.

- Actualization of the meaning field "Reading" in accordance with the goal, objectives and hypothesis of the study.
- A new approach to teaching reading on the basis of modern data and such parameters characterizing its essence as completeness (quantitative characteristic of understanding) and qualitative characteristics of understanding - depth (character of interpretation of information being perceived), as well as accuracy (adequacy of semantic perception of the text to the author's intent), i.e
- establishment of control objects,
- clarification of the basic skills of reading for gist related to,
- the perception of language material,
- the semantic perception of text content including mechanisms of probability prognosis,
- step-by-step test control of reading comprehension for gist.

The theoretical significance of the research

- The teaching reading methodology, in particularly reading for information/ gist, has been expanded and enriched.
- Theoretically substantiated a new conceptual approach to reading perception assessment and differentiation of reading types, in particular with global comprehension, with an indication of its relevant parameters.
- The typology of test tasks for the purpose of controlling global comprehension was realized.

The practical significance of the research

- A new approach was tested in practice. It was directed at the realization of reading comprehension control strategies.
- The main ideas of advanced approach can be included in the course of foreign language teaching methodology and realized in the practice of teaching foreign languages and seminars.
- The key points of the advanced approach can be used during teacher training courses and pedagogical practice of students.

The content and volume of the research. The thesis contains an introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. The volume of the dissertation is 111 pages. The main results of the research are published in 6 scientific articles.